ՄԻ ՆՈՐԱՀԱՅՏ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Անցած աշնանը Ֆրանսիա մեկնեց սովետական տուրիստների մի խումբ, այդ թվում Հայհիդրոէներգոնախագծի չորս ինժեներ։

Փարիզի կենտրոնում տեսարժան վայրերը շրջագայելիս նրանք լինում են 1243-1248 թթ. կառուցված Սուրբ ժամատանը, որը կից է արդարադատության պալատին։

Հիշյալ ժամատան երկրորդ հարկի բաց այունասրահի մուտքի ձախ քարակոփ պատին նկատվում է թեմատիկ հարթաքանդակի մի շարք, որի մեջ նրանց ուշադրությունը գրավում է երկու դրվագ։

Քանդակների բովանդակությունը աստվածաբանական էր։ Նրանցից մեկի վրա պատկերված են վերահաս ջրհեղեղից խուսափող կենդանիներ, որոնք թեք հարթակի վրայով բարձրանում են Նոյի նավակը, որ նախօրոք տեղ են գրավել մի քանի մարդիկ (նրանց թիվը չորս է)։

Քանդակներից երկրորդը պատկերում է հեղեղված աշխարհը և նրա վրա միայնակ Նոյան նավակը, որը տանում է մարդկանց, և որ գլխավորն է՝ մեր Զվարթնոց տաճարը։ Զվարթնոցը պատկերված է նաև նախորդ քանդակում։ Մեր ձեռքի տակ են հիշյալ երկու քանդակների լուսանկարները, որոնցից մեկը բերում ենք ստորև։

Ինչպես հայտնի է, Զվարթնոց տաճարը կառուցվել է մեր թվականության 641-661 թվականներին, կանգուն է մնացել շուրջ երկու հարյուր տարի։

Հայտնի է նույնպես, որ 989-1020 թվականներին Զվարթնոցին հար և նման մի այլ տաճար է կառուցվել Անիում։ Դա Գագկաշեն Սուրբ Գրիգոր եկեղեցին է, որ դարձյալ մեզ է հասել փլատակ վիճակում՝ հողով ծածկված։

Մեր դարի սկզբներում սկսվում են Զվարթնոց տաճարի ավերակների պեղումները։

Ականավոր ճարտարապետ Թորոս Թորամանյանը 1909 թ. [իրականում՝ 1904 թ. – Ծ.Կ.] ուսումնասիրում և չափագրում է այն ամները, ինչ բացվել էին պեղումների ընթացքում, ճարտարապետ-գիտնականի հմտությամբ

ստեղծում է Զվարթնոցի վերակազմության նախագիծը: Համաձայն այդ նախագծի, Զվարթնոցն իր հիմքում ունի հավասարաթև խաչի ձև, իսկ դրսից՝ բոլորակ է, ավելի ճիշտ՝ հավասարակողմ բազմանիստ: Ծավալային տեսակետից այն մի հոյակապ կենտրոնագմբեթ եռահարկ կառուցվածք է:



Նկ. 1 - Հարթաքանդակը Զվարթնոց տաճարով:

Թե ինչպե՞ս է Զվարթնոց կառուցողը վերը նկարագրված հիմքի վրա բարձրացրել բոլոր երեք հարկերում (յարուսներում) բոլորակ այդ կենտրոնագմբեթ շենքը, այդ խնդիրն է, որի շուրջը և տեղի են ունեցել բուռն վեճեր, թե՛ այն ժամանակ, երբ ճարտարապետ Թորամանյանը ստեղծում էր վերակազմության իր նախագիծը, և թե՛ հետագայում, ընդհուպ մինչև մեր օրերը:

Թորամանյանը չափագրության արդյունքների և իր գեղագետի ըմբռնման հիման վրա կռահել և գտել է կոնստրուկտիվ կառուցվածքի այն յուրահատուկ ձևը, որն այնքան համարձակորեն տասներեք դար առաջ կիրառել է Զվարթնոցը կառուցող ճարտարապետը:

Կառուցվածքային այդ հանդուգն հղացման որոշ թերություններ հիմք են տվել տարբեր մարդկանց կասկածի տակ առնելու Զվարթնոցի եռաստիճան լինելու հանգամանքը:

Երբ 1905-1906 թվերին Նիկոլայ Մառի կողմից ղեկավարվող պեղումների ժամանակ բացվեց Անիի Գագկաշեն եկեղեցու ավերակը. գտնվեց նաև Գագիկ թագավորի արձանը՝ զույգ ձեռքերին բռնած մի մոդել, որը ներկայացնում էր հենց Գագկաշեն եկեղեցին։ Այն բոլորակ ձև ուներ իր երեք հարկերում և նման էր Զվարթնոցի վերակազմության Թորոմանյանի ներակայացրած նախագծին։

Հիշյալ մոդելի երջանիկ գյուտով Զվարթնոցի համայնապատկերը հաստատվեց Թորամանյանի նախագծի ձևով։

Ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր Ա. Կուզնեցովը 1951 թ. լույս ընծայած զանազան շինությունների կոնստրուկցիաների ուսումնասիրությանը նվիրված իր գրքում այն կարծիքն է հայտնում, թե հնարավոր է, որ Զվարթնոցի երկրորդ հարկը (յարուսը) ունեցած լինի ոչ թե բոլորակ ձև, այլ՝ հավասարաթև խաչի ձև։ Նման ենթադրություններ զանազան առիթներով հայտնել են նաև ուրիշները։

Ճարտարապետության թեկնածու Ս. Մնացականյանը 1956 թվի ընթացքում կատարեց որոշ ուսումնասիրություն և Գիտությունների ակադեմիայի Արվեստի սեկտորի մի նիստում շարադրեց և գծագրերով ցույց տվեց իր հայացքները Զվարթնոցի վերակազմության նախագծի մասին, կանգնելով Կուզնեցովի տեսակետի վրա։

Ի՞նչ հանգամանքներ են, որ որոշ տարակուսանքի առիթ են տալիս, թե իբր Զվարթնոցի երկրորդ հարկաբաժինը ոչ թե բոլորակ է եղել, այլ խաչաձև։ Նախ, որ իբր երկրորդ հարկաբաժնի հոծ պատերի ծանրությունը ի վիճակի չեն եղել կրելու իրենց վրա ոչ միայն երկու հարթությամբ կորություն ունեցող այն ութ կամարները, որոնք հենված են եղել առաջին հարկաբաժնի չորս արծվախոյակ սյուների և խաչի թևերը կազմող չորս կամարաշարի գագաթների վրա, այլև հենց իրենք՝ հենարանները։ Այնուհետև երկրորդ հարկաբաժնի Թորամանյանի ցույց տված երեսուներկու պատուհաններից, իբր թե լուսամուտի իրենց դերը կատարում են միմիայն 12-ը, այսինքն՝ ամեն մի խաչաթևում՝ 3-ը, և որ մնացած 20-ը անիմաստ են։

Կան և այլ փաստարկներ, որոնք ունեն համեմատաբար երկրորդական նշանակություն։

Այս խնդիրների հանգամանալից քննարկումը թողնելով ավելի հարմար ժամանակի, այժմ դառնանք այն լուսանկարներին, որոնց մասին խոսք եղավ վերևում։

Ի՞նչ մտքերի են հանգեցնում այժմ մեզ այն լուսանկարները, որ բերվել են Փարիզից։

Մենք չենք տարակուսում, որ Սուրբ ժամատան քարակոփ պատի վրա գոյություն ունեցող աստվածաբանական բովանդակության Զվարթնոցի պատկերը կրող քանդակը կատարված է բուն շենքի կառուցման ժամանակ, այն է՝ 1243-1248 թթ.։ Հակառակը հազվադեպ է պատահում, իսկ նրա բովանդակությունը աներկբայորեն խոսում է նրա հնության մասին։

Երկրորդ, որ այդ քանդակողը պետք է որ հայ եղած լինի։ Այս էլ բնական է, քանի որ քրիստոնությունը դեպի հյուսիս և դեպի Եվրոպա տարածվելիս իր հետ տարել է նաև արդեն հռչակ ստացած կառուցող հայ վարպետների, թերևս և հայ ճարտարապետների։ Ինքնին հասկանալի է, որ ֆրանսիացին և ընդհանրապես, ոչ հայը, կարող էր քանդակել և՛ ջրհեղեղի պատմության դրվագը, և՛ Նոյան նավակը, նույնիսկ Արարատ լեռը, որի գագաթը, ըստ ավանդության, եղել է հանգրվանը Նոյան նավակի համար։ Սակայն Զվարթնոցի պատկերը իր հետ տարել է հայ մարդը։

Այստեղ մեզ հետաքրքրողը Զվարթնոցի քանդակի ճարտարապետական կողմն է։ Այսինքն՝ թե ինչպես է ստեղծվել նրա պատկերը։ Կարող է լինել երկու ենթադրություն։ Նախ, ինչպես գիտենք, Զվարթնոցը փլվել է ավելի վաղ, քան Սուրբ ժամատունն է կառուցվել Փարիզում, ուրեմն քանդակողը Զվարթնոցը չի կարող տեսած լինել կանգուն վիճակում։ Զվարթնոցի կրկնակ Գագկաշեն Սուրբ Գրիգոր եկեղեցին Անիում կառուցումն ավարտելուց մի քանի տարի անց ճեղքվածքներ է տվել։ Սակայն, ինչպես ցույց են տալիս պեղումների նյութերը, իր ժամանակին միջոցառումների են դիմել քանդման առաջն առնելու համար, այն է՝ խիստ

ուժեղացվել են այուները։ Հայտնի է դարձել նաև, որ Անիի Գագկաշեն եկեղեցին միանգամից չի կործանվել, այլ քայքայվել է երկար ժամանակի ընթացքում։ Այս դեպքում կարելի է ենթադրել, որ դրանից 180-200 տարի անց, այսինքն 1243 թվին ապրած հասուն վարպետը կարող էր սեփական աչքերով տեսած լինել Գագկաշենը և նրա պատկերը դրոշմած լինել իր նոր աշխատանքում։

Կարող էր լինել և հետևյալը, ժամանակի գրական նյութերը իրենց էջերում թերևս պահպանած են եղել Զվարթնոցի կերպարը, այդ նյութերին ծանոթ է եղել քանդակողը. չէ՞ որ Զվարթնոցը եղել է հռչակավոր կառուցվածք ու սրբավայր։

Մեր ձեռքի տակ եղած լուսանկարները առիթ են տալիս մտածելու, թե արդյոք ճարտարապետ Թորամանյանը մինչ Զվարթնոցի վերակազմության աշխատանքներն սկսելը տեսե՞լ է Փարիզի Սուրբ ժամատան Զվարթնոցի պատկերը կրող քանդակը։

Հայտնի է, որ Թորամանյանը երիտասարդ հասակում ապրել է Փարիզում, զբաղվել է ուսմամբ ու ուսումնասիրություններով։ Հիշյալ քանդակների մասին Թորամանյանը չի հիշատակում որևէ գործում։ Սակայն մեզ թվում է, որ այդ քանդակները պետք է որ տեսած լինի և թերևս նա առիթ կունենար մատնացույց անել այդ կարևոր հիշատակարանը, եթե ընդդիմախոսների դեմ Զվարթնոցի վերակազմության իր նախագծի ճշմարտությունը չհաստատեր Գագկաշենի Գագիկ թագավորի ձեռքում բռնած մոդելը։

Թորամանյանի՝ Փարիզի քանդակը տեսած լինելը ամենևին էլ չի նսեմացնում մեծ վարպետի փառքը, քանի որ քանդակի և վերակազմության հոյակապ պատկերի միջև եղած տարբերությունը հաստատում է, որ ճարտարապետը ավելի շատ հիմնվել է ավերակի բեկորների գիտական խոր ուսումնասիրության վրա։

Բացարձակորեն անհիմն է այն կասկածը, թե գուցե հնարավոր լինի, որ Փարիզի քանդակը կատարված լինի Թորոմանյանի վերակազմության նախագծի հիման վրա։ Հիշյալ կասկածը ժխտող շատ հանգամանքներից

բացի, փաստացին այն է, որ քանդակի մեջ չկան բազմաթիվ էլեմենտներ, որոնք Թորոմանյանի նախագծի և հենց Զվարթնոցի բնորոշ կողմերից են:

Վերջին հաշվով ի՞նչ է ասում քանդակը: Այն, որ **Զվարթնոցը եղել է եռաստիճան (трехярусный) և որ բոլոր աստիճանների հիմքում ունեցել է կոր ձև**: Այսինքն այնպես, ինչպես 55 տարի սրանից առաջ տվել է իր վերակազմության նախագիծը Թորոս Թորոմանյանը:

Սա այն կարևորն է, որը պետք է նկատի ունենան Զվարթնոցի վերակազմության Թրոմանյանի նախագծի ճշտության վիճարկողները:

Նկ. 2, 3, 4, 5 – Հարթաքանդակների ժամանակակից լուսանկարներ:

Մեր ընթերցողների և հատկապես ճարտարապետության պատմությամբ զբաղվողների ուշադրությանը ներկայացվող վերոհիշյալ քանդակն իր

նշանակությամբ, թերևս, մոտենում է այն մոդելին, որը հայտնաբերվել է 1905-1906 թվերին Անիի Գագկաշեն տաճարի պեղումների ժամանակ։

Ավելորդ է ասել, որ այժմ, երբ Արվեստի պատմության ու տեսության ինստիտուտը լուրջ աշխատանք է տանում մեր ճարտարապետության փառքը կազմող այդ կոթողի խորն ուսումնասիրության ուղղությամբ, հայտնաբերված հիշյալ քանդակները պետք է դառնան հատուկ քննարկման առարկա՝ վերջնականապես ճշտելու վիճելի այն հարցերը, որոնք հուզում են ոչ միայն տեսությամբ զբաղվող ընկերներին, այլև ողջ ճարտարապետական հասարակությանը։

ՏԻՐԱՆ ՄԱՐՈՒԹՅԱՆ

Ճարտարապետ

«Գրական թերթ», 3 ապրիլի 1959 թ., թիվ 13 (977):